ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Առաջնորդել Հիսուսի նման (Մաս 1)

«Ժողովուրդն առանց առաջնորդության կընկնի.» Առակ 11:14

Առաջնորդության վերաբերյալ Հիսուսի յոթ սկզբունքները

1. Ինքնության հաստատում: Իմանալ թե ո՞վ եմ ես

«Ես եմ աշխարհքի լույսը... Աստծո որդին... ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը... կյանքի հացը:» (Հովհաննես 8:12, Մարկոս 14:62, Հովհաննես 14:6, 6:35)

«Ես ինքս եմ վկայում իմ մասին.» Հովհաննես 8:18

2. Պարզաբանում: Իմանալ թե ի՞նչ եմ ուզում իրականացնել

«...գիտեմ, թե որտեղի՛ց եմ եկել և ո՛ւր եմ գնում.» Հովհաննես 8:14

«Ես...պետք է Աստծու արքայությունը քարոզեմ, որովհետև հենց դրա համար եմ ուղարկվել:» Ղուկաս 4:43

3. Շարժառիթ: Իմանալ թե ու՞մ եմ ուզում հաճեցնել

«Ես իմ կամքը չեմ կատարում, այլ ինձ ուղարկողի կամքը:» Հովհաննես 5:30

«Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել.» Ղուկաս 16:13

«Ես քեզ երկրի վրա փառավորեցի. կատարեցի այն գործը, որն ինձ տվեցիր, որ անեմ:» Հովհաննես 17:4

4. Համագործակցություն: Աշխատել փոքր խմբերի հետ

«Նա ընտրեց տասներկու հոգու, որ իր հետ լինեն, որ նրանց ուղարկի քարոզելու.» Մարկոս 3:14

«Այդ ժամանակ նրանց ասաց. «Հոգիս մահու չափ տրտմած է. այստե՛ղ մնացեք ու ինձ հետ արթո՛ւն կացեք:» Մատթեոս 26:38

5. Կենտրոնացում: Կենտրոնանալ այն բանի վրա, որ կարևոր է

«Երբ լրանում էին նրա օրերը աշխարհից վերանալու, նա որոշեց Երուսաղեմ գնալ:» Ղուկաս 9:51

«Ոչ ոք, ով ձեռքը մաճի վրա է դնում ու հետ նայում, հարմար չէ Աստծու արքայության համար»::» Ղուկաս 9:62

«Մարթան շատ զբաղված էր...Հիսուսը պատասխանեց... դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված: Բայց մի բան է հարկավոր.» Ղուկաս 10:40-42

6. Խորհել: Շարունակաբար լսել Աստծուն

«Վաղ առավոտյան՝ լույսը դեռ չբացված, վեր կացավ, դուրս եկավ, մի ամայի տեղ գնաց ու այնտեղ աղոթում էր:» Մարկոս 1:35

«Նրա համբավն ավելի էր տարածվում, և շատ ժողովուրդ էր հավաքվում նրան լսելու ու իրենց հիվանդություններից բժշկվելու: Իսկ նա հեռանում էր ամայի տեղեր և աղոթում:» Ղուկաս 5:15-16

«Արմատավորված և նրանով շինված, հավատի մեջ հաստատված, ինչպես որ սովորեցիք, և դրա մեջ աճե՛ք գոհություն հայտնելով:» Կողոսացիներ 2:7

7. Հանգստանալ: Ժամանակ տալ վերալիցքավորվելու

«Դուք առանձին մի ամայի տե՛ղ եկեք ու մի քիչ հանգստացե՛ք»: Որովհետև եկող-գնացողները շատ էին, և նույնիսկ հաց ուտելու ժամանակ չունեին:» Մարկոս 6:31

«Մարդու Որդին եկավ, ուտում է և խմում.» Մատթեոս 11:19

Հաջորդ Քարոզի Թեման:

ՀԻՆԳ ՀԱՑԻ ԴԱՍԸ

Հովիվ Սարօ Խաչիկեան